

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/21

ք. Երևան

29.09.2022թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԱՐԿԱԴԻԱ ՇԻՆ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Գ. Տիգրանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 17.02.2022թ. N 200-Ն որոշումը կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված <<Երևանի Միքայել Նալբանդյանի անվան հ.33 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի, <<Երևանի Խանգաղյանի անվան հ.184 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի, <<Երևանի Ա. Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի և <<Երևանի Սիլվա Կապուտիկյանի անվան թիվ 145 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճների կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Աշխատանքի ողջ ծավալով կատարման ժամկետ է սահմանվում

<<Երևանի Միքայել Նալբանդյանի անվան հ.33 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքներ - 330 օրացուցային օր,

<<Երևանի Խանգաղյանի անվան հ.184 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքներ - 330 օրացուցային օր,

<<Երևանի Ա. Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքներ - 290 օրացուցային օր,

<<Երևանի Սիլվա Կապուտիկյանի անվան թիվ 145 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքներ - 290 օրացուցային օր:

Պայմանագրով նախատեսված աշխատանքի սկիզբ է համարվում Կապալառուին օբյեկտը հանձնելու վերաբերյալ գրության հաջորդող աշխատանքային օրը՝ պայմանով, որ առկա են տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման համապատասխան պայմանագրերը և շինարարության թույլտվությունները:

Աշխատանքի կատարման երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից պայմանագրի արդյունքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

1.3.1 Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների և ծավալների կատարման ժամկետները սահմանված են օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

1.3.2 Պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետների մեջ չեն հաշվարկվում.

1.3.2.1 հեղինակային և/կամ տեխնիկական հսկողության պայմանագրերի լուծման դեպքում՝ պայմանագրերի լուծման օրվանից մինչև նոր պայմանագրերի կնքմանը հաջորդող օրն ընկած ժամանակահատվածը,

1.3.2.2 շինարարական աշխատանքների կատարումն անհնարին դառնալու օրվանից մինչև դրանց վերսկսելու օրն ընկած ժամանակահատվածը, որն արձանագրվում է տեխնիկական և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների առաջարկության հիման վրա՝ պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված եզրակացությամբ:



2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքներն ամբողջությամբ կատարել անձամբ պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի 5 Հավելվածում (Աղյուսակներ N 1 և N 2)

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Կողմերի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքները:

4.6 Աշխատանքն ամբողջությամբ ընդունելիս գործում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝ ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն: Ընդ որում՝ վերջին վճարման կատարողականի գումարը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

6) չի կիրառվում պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետը:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 785 000 000 (յոթ հարյուր ութսունհինգ միլիոն) ՀՀ դրամ, որից 130 833 333.33 (մեկ հարյուր երեսուն միլիոն ութ հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք ամբողջ երեսուներեք հարյուրերորդական) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն, ընդ որում՝

<<Երևանի Միքայել Նալբանդյանի անվան հ.33 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքներ - 221 224 517 (երկու հարյուր քսանմեկ միլիոն երկու հարյուր քսանչորս հազար հինգ հարյուր տասնյոթ), որից 36 870 752.83 (երեսունվեց միլիոն ութ հարյուր յոթանասուն հազար յոթ հարյուր հիսուներկու ամբողջ ութսուներեք հարյուրերորդական) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն,

<<Երևանի Խանգաղյանի անվան հ.184 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքներ - 229 462 877 (երկու հարյուր քսանինը միլիոն չորս հարյուր վաթսուներկու հազար ութ հարյուր յոթանասունյոթ), որից 38 243 812.83 (երեսունութե միլիոն երկու հարյուր քառասուներեք հազար ութ հարյուր տասներկու ամբողջ ութսուներեք հարյուրերորդական) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն,

<<Երևանի Ա. Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքներ - 194 720 458 (մեկ հարյուր ինսունչորս միլիոն յոթ հարյուր քսան հազար չորս հարյուր հիսունութե), որից 32 453 409.67 (երեսուներկու միլիոն չորս հարյուր հիսուներեք հազար չորս հարյուր ինը ամբողջ վաթսունյոթ հարյուրերորդական) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն,

<<Երևանի Սիլվա Կապուտիկյանի անվան թիվ 145 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքներ - 139 592 148 (մեկ հարյուր երեսունինը միլիոն հինգ հարյուր ինսուներկու հազար մեկ հարյուր քառասունութե), որից 23 265 358 (քսաներեք միլիոն երկու հարյուր վաթսունհինգ հազար երեք հարյուր հիսունութե) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով

նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի Պայմանագրում նշված հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

5.4 Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.5 Պայմանագրի գնից՝ մինչև 25%-ի չափով, Պատվիրատուն կարող է փոխանցել Կապալառուի բանկային հաշվին որպես կանխավճար՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում՝ հիմք ընդունելով աշխատանքների կատարման տվյալ տարվա համար նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում կատարվելիք աշխատանքների օրացուցային գրաֆիկով սահմանված ժամկետները: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.6 Տույժի հաշվարկման հիմքում ընկած աշխատանքային օրերի մեջ չեն ներառվում կատարողական ակտում արտացոլված ժամանակահատվածի վերջին օրվանից մինչև կատարողական փաստաթղթերը Պատվիրատուին հանձնելու ամսաթիվն ընկած մինչև հինգ աշխատանքային օրը, որը տրվում է Կապալառուին՝ տվյալ փուլի աշխատանքներն ավարտելուց հետո կատարողական փաստաթղթերը կազմելու և աշխատանքները տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության կողմից հաստատվելու հետ կապված գործողությունները պատշաճ կերպով իրականացնելու համար:

6.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.8 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի ձեռքբերման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ընդհանուր ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ընդհանուր ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով (անհրաժեշտության դեպքում բանկային երաշխիքների ձևով ներկայացրած ապահովումների ժամկետների երկարաձգումը հավաստող փաստաթղթերի առկայությամբ):

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ

կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՅՅԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

«Արաբիա Շին» ՊՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
«Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011034411, 900011034478,
900011039931, 900011039949
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝



Ա. Արտոնյան

(ստորագրություն)

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝

«ԱՐԿԱԴԻԱ ՇԻՆ» ՍՊԸ
ք. Երևան, Կենտրոն, Վ. Անտառային 136/1
«Քիբլուս Բանկ Արմենիա» ՓԲԸ
Հ/Հ 2140006237250100
ՀՎՀՀ 02847373

Տնօրեն՝



Գ. Տիգրանյան

Կ.Տ.

Handwritten signatures in blue ink at the bottom of the page.

**<<Երևանի Միջայել Նալբանդյանի անվան հ.33 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի
 նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների
 ծավալաթերթ-նախահաշիվ**

Ձ/հ	Աշխատանքների անվանումը	Չափման միավոր	Քանակ	Միավորի ընդ.արժեք /հազար դրամ/	Ընդհանուր արժեք /հազար դրամ/
1	3	4	5	6	7
	միաձույլ հիմնային հեծան -1,7նիշ				
1	Գրունտի մշակում էքսկավատորով 3-րդ կարգի բնահողում կողլիցք	մ3	771	0.905	697.755
2	3րդ կարգի գրունտի մշակում ձեռքով	մ3	41.00	2.717	111.397
3	Հիմքերի մակերևույթի ջրամեկուսացում բիտումի մածիկով 2 շերտ	մ ²	490.5	1.087	533.174
4	Գրունտի ետլիցք մեխակիզմով	մ3	974	0.905	881.470
5	Գրունտի ետլիցք ձեռքով տոփանումով	մ3	120	2.717	326.040
6	Լրացուցիչ գրունտի բարձում և տեղափոխում 13կմ հեռ.վրա	տ	507.60	0.905	459.378
7	Բազալտե խճի իրականացում	մ3	19.6	9.058	177.537
8	Բետոնե նախապատրաստական շերտ B7,5 բետոնով	մ3	19.6	45.292	887.723
9	Բուտոբետոնե հիմքի իրականացում բետոնով B15	մ ³	63.90	45.292	2894.159
10	Ե/բետոնե հիմնային հեծանի իրականացում B20բետոնով	մ3	97.50	72.465	7065.338
11	Ամրան Փ16-Փ28 A500c	տ	8.2000	362.330	2971.106
12	Ամրան Փ8A240 I	տ	2.5000	362.330	905.825
13	Մետաղական թիթեղ 80*80*10	կգ	32.2	4.529	145.834
1	Ընդհամենը՝ միաձույլ հիմնային հեծան -1,7նիշ			0.000	18056.735
	Ե/բետոնե հատակ -0,05 նիշ				
1	Խճի շերտ	մ3	74.60	7.700	574.420
2	Ամրան Փ16-Փ28 A500c	տ	0.5000	362.330	181.165
3	Բետոնե նախապատրաստական շերտ B12,5 բետոնով	մ3	15.2	40.762	619.582
4	Ե/բետոնե միաձույլ հենապատի իրականացում B20բետոնով	մ3	12.97	72.466	939.884
5	Ե/բետոնե հատակի իրականացում B12,5բետոնով	մ3	74.60	49.820	3716.572
6	Մետ. Ցանց Փ5Bp1 150*150	մ ²	707.0	0.906	640.542
2	Ընդհամենը՝ Ե/բետոնե հատակ -0,05 նիշ			0.000	6672.165
	շրջանակ Ա, Բ, Գ, Դ , 1, 2, 3, 4, 5 առանցքներով				
	շրջանակ Ա,առանցքով				
1	Ե/բետոնե սյուների իրականացում B25 բետոնով	մ ³	6.80	76.995	523.566
2	Ե/բետոնե պարզունակների իրականացում B25 բետոնով	մ ³	14.80	76.995	1139.526
3	Ամրան Փ14÷25 A500c	տ	3.0860	380.446	1174.056
4	Ամրան Փ8A240	տ	1.0090	380.446	383.870
5	Մետաղական թիթեղ 80*80*10	կգ	56.5	4.530	255.945
	շրջանակ Ա' առանցքով				0.000
1	Ե/բետոնե սյուների իրականացում B25 բետոնով	մ ³	5.10	76.995	392.675
2	Ե/բետոնե պարզունակների իրականացում B25 բետոնով	մ ³	7.90	76.995	608.261
3	Ամրան Փ16÷28A500c	տ	2.3980	380.446	912.310
4	Ամրան Փ8A240	տ	0.6221	380.446	236.675
5	Մետաղական թիթեղ 80*80*10	կգ	56.3	4.530	255.039
	շրջանակ Բ առանցքով				0.000
1	Ե/բետոնե սյուների իրականացում B25 բետոնով	մ ³	3.70	76.995	284.882
2	Ե/բետոնե պարզունակների իրականացում B25 բետոնով	մ ³	1.40	76.995	107.793
3	Ամրան Փ16÷25A500c	տ	0.9403	380.446	357.733
4	Ամրան Փ8A240	տ	0.2960	380.446	112.612
5	Մետաղական թիթեղ 80*80*10	կգ	40.2	4.530	182.106
	շրջանակ Գ առանցքով				0.000
1	Ե/բետոնե սյուների իրականացում B25 բետոնով	մ ³	2.10	76.995	161.690

2	Ե/բետոնե պարզունակների իրականացում B25 բետոնով	մ ³	1.40	76.995	107.793
3	Ամրան Փ18÷28A500c	տ	1.0765	380.446	409.550
4	Ամրան Փ8A240	տ	0.3262	380.446	124.101
5	Մետաղական թիթեղ 80*80*10	կգ	40.2	4.530	182.106
	շրջանակ Դ առանցքով				0.000
1	Ե/բետոնե սյուների իրականացում B25 բետոնով	մ ³	6.80	76.995	523.566
2	Ե/բետոնե պարզունակների իրականացում B25 բետոնով	մ ³	13.90	76.995	1070.231
3	Ամրան Փ14÷28A500c	տ	3.7450	380.446	1424.770
4	Ամրան Փ8A240	տ	0.9661	380.446	367.549
5	Մետաղական թիթեղ 80*80*10	կգ	56.3	4.530	255.039
	շրջանակ 1 առանցքով				0.000
1	Ե/բետոնե սյուների իրականացում B25 բետոնով	մ ³	0.40	76.995	30.798
2	Ե/բետոնե պարզունակների իրականացում B25 բետոնով	մ ³	9.90	76.995	762.251
3	Ամրան Փ14÷25A500c	տ	1.0440	380.446	397.186
4	Ամրան Փ8A240	տ	0.4264	380.446	162.222
5	Մետաղական թիթեղ 80*80*10	կգ	16.1	4.530	72.933
	շրջանակ 2 առանցքով				0.000
1	Ե/բետոնե պարզունակների իրականացում B25 բետոնով	մ ³	10.00	76.995	769.950
2	Ամրան Փ20÷25A500c	տ	1.1000	380.446	418.491
3	Ամրան Փ8A240	տ	0.4116	380.446	156.592
4	Մետաղական թիթեղ 80*80*10	կգ	16.1	4.530	72.933
	շրջանակ 3. 4 առանցքով				0.000
1	Ե/բետոնե պարզունակների իրականացում B25 բետոնով	մ ³	2.80	76.995	215.586
2	Ամրան Փ25 A500c	տ	0.3578	380.446	136.124
3	Ամրան Փ8A240	տ	0.1057	380.446	40.213
4	Մետաղական թիթեղ 80*80*10	կգ	16.1	4.530	72.933
	շրջանակ 5 առանցքով				0.000
1	Ե/բետոնե սյուների իրականացում B25 բետոնով	մ ³	0.40	76.995	30.798
2	Ե/բետոնե պարզունակների իրականացում B25 բետոնով	մ ³	10.90	76.995	839.246
3	Ամրան Փ14÷28A500c	տ	1.8440	380.446	701.542
4	Ամրան Փ8A240	տ	0.4695	380.446	178.619
5	Մետաղական թիթեղ 80*80*10	կգ	16.1	4.530	72.933
3	Ընդհամենը՝ շրջանակ Ա, Բ, Գ, Դ, 1, 2, 3, 4, 5 առանցքներով			0.000	16684.791
	ծածկի սալ +3.250, +6.300 նիշերում, մետաղական ֆերմա 20.4մ				
	ծածկի սալի +3,250 նիշում				
1	Ե/բետոնե սալի իրականացում B25 բետոնով	մ ³	24.10	76.955	1854.616
2	Ամրան Փ14-Փ16A500c	տ	4.4450	380.446	1691.082
4	Ամրան Փ8A240	տ	0.1224	380.446	46.567
	ծածկի սալի +6,300 նիշում				0.000
1	Ե/բետոնե սալի իրականացում B25 բետոնով	մ ³	11.70	76.995	900.842
2	Ամրան Փ14-Փ16A500c	տ	1.4600	380.446	555.451
4	Ամրան Փ8A240	տ	0.1440	380.446	54.784
	մետաղական ֆերմա 20.4մ				0.000
1	Մետաղական էլեմենտներով ֆերմաների մոնտաժում /ծպեղնավորոք-հեծան, անկյունակ, մետաղական թիթեղ	տ	9.020	108.699	980.465
2	75*75*5 անկյունակի արժեք	գծմ	11.20	3.170	35.504
4	N12 մետաղական հեծանի արժեք	գծմ	341.6000	4.076	1392.362
5	75*75*6 անկյունակի արժեք	գծմ	56.4000	3.170	178.788
6	90*90*6 անկյունակի արժեք	գծմ	75.4800	4.530	341.924
10	մետաղական թիթեղ 10÷12 մմ հաստության	տ	1.6300	407.620	664.421
11	Մետաղական ուղղաձիգ կապերի, մոնտաժում /18 հատ /	տ	7.5800	108.699	823.938
12	մետաղական թիթեղ 8 մմ հաստության	տ	1.182	407.620	481.807
	90*90*6 անկյունակի արժեք	գծմ	275.40	4.530	1247.562
13	75*75*6 անկյունակի արժեք	գծմ	55.80	3.170	176.886
15	Մետաղական հորիզոնական կապերի, մոնտաժում / 24հատ	տ	3.4550	108.699	375.555
16	մետաղական թիթեղ 8 մմ հաստության	տ	0.7400	407.620	301.639

17	75*75*5 անկյունակի արժեքը	գծմ	117.60	3.170	372.792
18	Մետաղական մասերի ներկում	տ	3.455	108.699	375.555
4	Ընդհամենը՝ ծածկի սալ +3.250, +6.300 նիշերում, մետաղական ֆերմա 20.4մ			0.000	12852.539
	Տրիբունայի կառուցում, Արտաքին պատեր, տանիքի ծածկ				
	Տրիբունայի կառուցում				
1	Մետաղական էլեմենտներով տրիբունաների մոնտաժում /ծպեղնավորոք-հեծան, անկյունակ, մետաղական թիթեղ	տ	2.880	135.873	391.314
2	Տախտակ 30x100 (Доска 30x100)	մ3	0.600	271.747	163.048
3	Չորսու 60x125 (Брус 60x125)	մ3	2.700	271.747	733.717
4	Ինքնակտրող պտուտակ $\varnothing 8 \times 80$	հատ	96.000	0.181	17.376
5	Ինքնակտրող պտուտակ $\varnothing 6 \times 50$	հատ	248.000	0.181	44.888
6	Պողպատե խողովակ 200x200x5	գծմ	10.32	23.550	243.036
7	Պողպատե խողովակ 200x100x5	գծմ	64.8	18.116	1173.917
8	Պողպատե խողովակ 100x50x3	գծմ	68.0	4.076	277.168
9	Պողպատե խողովակ 100x50x2	գծմ	31.8	3.623	115.211
10	Պողպատե խողովակ 40x30x2	գծմ	41.000	1.358	55.678
11	Ընդամենը $\square 40 \times 40 \times 1.5$	գծմ	31.200	1.268	39.562
12	մետաղական թիթեղ 8 մմ հաստության	տ	0.7400	452.912	335.155
13	Տրիբունայի փայտյա մասերի բարձրորակ յուղաներկում	մ ²	102.7	1.087	111.635
14	Մետաղական մասերի ներկում	տ	2.900	108.699	315.227
	Արտաքին պատեր				0.000
1	Արտաքին պատ իրականացում . պեմզաբլոկներով 200mm	մ ³	98.40	22.645	2228.268
2	Միջնորմների անցքերի լցում թեթև բետոնով 7,5	մ ³	7.0	27.175	190.225
3	Ճկուն կապ փրփրապլաստով 2սմ հաստ	մ ³	3.03	3.623	10.981
4	Փրփրապլաստի արժեքը	մ ²	150.1	0.271	40.677
5	Շարվածքի ամրանավորում	տ	0.4254	362.330	154.135
6	Ամրան $\Phi 14$ և $\Phi 28$ A500c	տ	0.4254	362.330	154.135
	տանիքի ծածկ				0.000
1	Տանիքածածկի իրականացում սենդվիչ պանելներով 120մմ հաստ. ցինկապատ պրոֆիլավոր գուլավոր թեթեղներից 0.45մմ հանքաբամբակով թերմամեկուսացված 120կգ/խմ	մ ²	490.00	22.645	11096.050
3	Մանր ծածկույթների երեսպատում 0.50մմ ցինկապատ գուլավոր թիթեղով	մ ²	83.4	5.435	453.279
4	Կախովի ջրհորանների /ուղղանկյուն ցինկապատ գուլավոր 0,5մմ/ իրականացում	գծմ	97.00	5.435	527.195
5	Ջրիտ խողովակների կոմպլեկտ 6,8մ բարձրությամբ $\Phi 120$ ցինկապատ գուլավոր թիթեղով	կ-տ	3.00	90.582	271.746
7	Տանիքի փայտե կոնստրուկցիաների իրականացում/	մ ³	4.924	317.038	1561.095
6	Ձևարգել 2 մ երկ. գուլավոր	հատ	12.0	18.116	217.392
5	Ընդհամենը՝ Տրիբունայի կառուցում, Արտաքին պատեր, տանիքի ծածկ			0.000	20922.111
	Միջնորմներ				
1	Միջնորմների շարվածքի իրականացում պեմզաբլոկներով 200մմ	մ ³	19.2	27.174	521.741
2	Միջնորմների անցքերի լցում թեթև բետոնով 7,5	մ ³	4.9	27.174	133.153
3	Շարվածքի ամրանավորում	տ	0.0964	362.330	6.986
4	Ամրան $\Phi 12$ A500c	տ	0.0000	362.330	0.000
5	Ամրան $\Phi 10$ A500c	տ	0.9640	362.330	349.286
6	Թիթեղ	կգ	42.78	0.452	19.337
7	Ճկուն կապ փրփրապլաստով 2սմ հաստ	մ ³	0.30	4.529	1.359
8	Փրփրապլաստի արժեքը	մ ²	16.0	0.271	4.336
9	Ե/բետոնե բարավորի իրականացում B15 բետոնով	մ ³	0.40	45.291	18.116
10	Ամրան $\Phi 6$ Ac	տ	0.011	362.330	4.149
11	Ամրան $\Phi 12$ A500c	տ	0.015	362.330	5.435
12	Միջնորմների շարվածքի իրականացում պեմզաբլոկներով 100մմ	մ ³	20.2	36.233	731.907
13	Միջնորմների անցքերի լցում թեթև բետոնով 7,5	մ ³	4.8	40.762	195.658
14	Շարվածքի ամրանավորում	տ	0.4130	72.466	29.928

15	Ամրան Φ12-Φ10A500c	տ	0.4130	362.330	149.642
17	Թիթեղ	կգ	105.80	0.453	47.927
18	Ճկուն կապ փրփրապլաստով 2սմ հաստ	մ ³	0.30	7.246	2.174
19	Փրփրապլաստի արժեքը	մ ²	15.0	0.271	4.065
20	Ե/բետոնե բարավորի իրականացում B15 բետոնով	մ ³	0.30	45.291	13.587
21	Ամրան Φ6 A240	տ	0.004	362.330	1.449
22	Ամրան Φ12-Φ10 A500c	տ	0.025	362.330	9.058
6	Ընդհամենը՝ Միջնորմներ			0.000	2249.293
	Քաղվածքներ				
1	Մետաղապլաստե բլոկով մոխրագույն 60մմ հաստ.ապակեփաթեթով 4+4 պատուհանների տեղադրում /բացվող մաս արտերկիր/	մ ²	17.25	49.820	859.395
2	Մետաղապլաստե բլոկով մոխրագույն 60մմ հաստ.ապակեփաթեթով 4+4 պատուհանների տեղադրում /չբացվող մաս արտերկիր/	մ ²	69.00	40.762	2812.578
4	Պատուհանագոգեր 350մմ հաստ.սպիտակ	գծմ	38.20	3.623	138.399
5	50մմ հաստ.350մմ լայնությամբ բազալտե սալերից արտաքին պատուհանագոգերի տեղադրում	մ ²	12.20	27.174	331.523
6	Մետաղապլաստե բլոկով մոխրագույն 60մմ հաստ.ապակեփաթեթով 4+4 դռների տեղադրում /արտերկիր/	մ ²	40.30	45.291	1825.227
7	Այլումինե մոխրագույն ջերմակամուրջով 60մմ հաստ.ապակեփաթեթով 4+4 դռների տեղադրում /Եվրոպական կամ համարժեք/	մ ²	4.77	95.111	453.679
8	Շեպերի գաջի սվաղ բարձրորակ	մ ²	7.91	5.440	43.030
9	Շեպերի բարձրորակ ներկում կիսափայլուն լատեքսային ներկով /ՇԵՆ կամ համարժեք/	մ ²	7.91	5.435	42.991
7	Ընդհամենը՝ Քաղվածքներ			0.000	6506.822
	Հատակներ			0.000	
1	Ց/ավազե հարթաշերտի իրականացում 30մմ հաստ.	մ ²	816.40	1.811	1478.500
2	Հատակների ջրամեկուսացում մեկ շերտ իզոգամով	մ ²	816.4	1.720	1404.208
3	Վինիլային հակաստատիկ 2մմ հաստ. Հոմոդեն հատակների իրականացում նախաշերտի,սոսնձի, շրիշակների հետ միասին	մ ²	354.0	10.870	3847.980
2	Լամինատե 10մմ հաստ. C5 կարգի հատակների իրականացում սպունգով շրիշակով	մ ²	16.50	8.150	134.475
5	Խեցեսալե սալիկներով հատակների իրականացում	մ ²	86.5	7.700	666.050
6	Մամլոգրանիտե սալերով հատակների իրականացում 600*600	մ ²	171.3	10.870	1862.031
7	Մամլոգրանիտե սալերով շրիշակների իրականացում h=100մմ	գծմ	117.7	1.811	213.155
8	Ընդհամենը՝ Հատակներ			0.000	9606.399
	մարզադահլիճի գույք, մարզադահլիճի պատուհանների և առաստաղի ցանց				
	մարզադահլիճի գույք				
1	Բասկետբոլի վահան ցանցով /մետաղական շրջանակ. Օրգանական ապակի, սիլիկոն	կ-տ	1.00	181.165	181.165
2	Բասկետբոլի մարզական վահան /մետաղական շրջանակ. Օրգանական ապակի, սիլիկոն	հատ	4.00	135.874	543.496
3	Գնդակը նշանակետին նետելու վահանակ	հատ	1.00	113.228	113.228
	մարզադահլիճի պատուհանների ցանց				0.000
1	Մետաղական կարկասի մոնտաժում /անկյունակ 50*50*5 և դյուբել	կգ	310.29	0.090	27.926
2	Անկյունակ 50*50*5	գծմ	132.80	2.536	336.781
3	դյուբել 6*40	հատ	120.00	0.090	10.800
4	Ֆուտբոլի դարպասի ցանց 7,2*2,5 D=4mm	հատ	1.70	13.587	23.098
5	Մետաղական մասերի ներկում	տ	0.180	54.350	9.783
	մարզադահլիճի առաստաղի ցանց				0.000
1	ցանցի ամրացում առաստաղին	մ ²	22.00	1.358	29.876
2	Մարտկոցների մետաղական ջողաարկիչների պատրաստում և տեղադրում /անկյունակ 50*50*5 և դյուբել/	կգ	189.29	0.453	85.749
3	Անկյունակ 50*50*5	գծմ	44.70	2.536	113.359
4	դյուբել 6*40	հատ	98.60	0.090	8.874

5	7,2*2,5 D=4mm ցանցի արժեքը	հատ	21.00	4.529	95.109
9	Ընդհամենը՝ մարզադահլիճի գույք, մարզադահլիճի պատուհանների և առաստաղի ցանց			0.000	1579.244
	Ներքին հարդարման աշխատանքներ				
1	Պատերի լավորակ գաջի սվաղի իրականացում	մ ²	1212.0	2.083	2524.596
2	Պատերի լավորակ ներկում կիսափայլուն լատեքսային ներկով /ՇԵՆ կամ համարժեք/	մ ²	1212.0	1.811	2194.932
5	Պատերի ց/ավազե սվաղի իրականացում	մ ²	223.60	1.811	404.940
6	Պատերի երեսպատում հախճասալով	մ ²	134.14	11.096	1488.417
7	Պլաստմասե կախովի առաստաղի իրականացում հիմնակմախքի պատրաստումով	մ ²	86.5	4.530	391.845
11	Պլաստմասե կախովի առաստաղի իրականացում հիմնակմախքի պատրաստումով	մ ²	158.0	4.530	715.740
10	Ընդհամենը՝ Ներքին հարդարման աշխատանքներ արտաքին պատերի ջերմամեկուսացում և հարդարում, աստիճաններ			0.000	7720.470
	արտաքին պատերի ջերմամեկուսացում և հարդարում				
1	Որմնախարիսի երեսպատում 30մմ հաստ.բազալտե սալերով h=600մմ	մ ²	56.4	10.870	613.068
2	Պատերի երեսպատում 30մմ հաստ.տրավերտիլե սալերով	մ ²	203.1	12.680	2575.308
3	Պատուհանների մացվածքների պարագծով 300մմ լայնությամբ հանքային մամակի տեղադրում 50մմ հաստ. խտութ.՝ 100-140 կգ/մ ³ ջերմահաղորդականությունը =0.040 վտ/մո Կ, որն ամրացվում է պոլիմերցեմենտային հատուկ սոսինձով /16,1մ ² /	մ ³	0.81	36.233	29.168
4	Արտաքին պատի երեսպատում Փիբրոցեմենտ սալերով	մ ²	558.3	10.417	5815.811
5	Արտաքին պատերի ջերմամեկուսացում XPS-50մմ փրփրապոլիստիրոլ, խտությունը 30-40կգ/խմ, ջերմահաղորդականությունը՝0.034վտ/մ ՕԿ, որն ամրացվում է պոլիմերցեմենտային հատուկ սոսինձով /2701,2մ ² /	մ ³	27.90	9.058	252.718
6	փրփրապոլիստիրոլ 50մմ արժեքը	մ ²	558.30	1.811	1011.081
7	Սոսինձի արժեքը	կգ	1116.0	0.181	201.996
8	Խցաբուրակի արժեքը	հատ	3875.0	0.181	701.375
9	Շենքի բոլոր անկյուններում , պատուհանների ու դռների պարագծով լրացուցիչ ուժեղացում թիթեյա անկյունակով 50*50մմ	գծմ	38.40	2.717	104.333
10	Շենքի բոլոր անկյուններում լրացուցիչ ուժեղացում ոչ մետաղական ցանցով	մ ²	16.40	0.906	14.858
11	Արտաքին պատերի ներկում ճակատային ներկով	մ ²	558.3	1.450	809.535
12	Փայտամածի իրականացում արտաքին աշխատանքների համար	մ ²	558.00	0.725	404.550
	աստիճաններ				0.000
1	Էվակուացիոն աստիճանավանդակի ե/բետոնե հիմնային հեծանի իրականացում B20բետոնով	մ ³	0.31	72.466	22.464
2	Էվակուացիոն աստիճանավանդակի Մետաղական էլեմենտների մոնտաժում	տ	0.6991	72.466	50.661
3	200*120*5 ուղղանկյուն խողովակի արժեքը	գծմ	13.7000	10.870	148.919
4	Մետաղական թիթեղ 5փ10 մմ հաստության	տ	0.3700	452.912	167.577
5	ցինկապատ բազրիքի մոնտաժում h=900մմ	մ ²	39.420	9.058	357.066
6	Մետաղական անկեռներ	կգ	50.000	0.453	22.650
7	Մետաղական մասերի ներկում	տ	0.6991	54.350	37.996
8	Ե/բետոնե միաձույլ աստիճանի կառուցում B25 բետոնով	մ ³	2.16	72.466	156.527
9	Ամրան Փ6 A240	տ	0.003	362.330	1.087
10	Ամրան Փ12-Փ8 A500c	տ	0.250	362.330	90.583
11	ցինկապատ բազրիքի մոնտաժում h=900մմ	մ ²	7.400	9.058	67.029
12	Մետաղական անկեռներ	կգ	50.000	0.453	22.650
11	Ընդհամենը՝ արտաքին պատերի ջերմամեկուսացում և հարդարում, աստիճաններ			0.000	13679.011
	Բարեկարգում՝ հենապատեր,կանաչապատում				
	Բարեկարգում				

	հենապատեր				
1	3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով կողիցք	մ ³	64.90	0.905	58.735
2	խամբարաբետոնե ժապավենային հիմքերի պատրաստում B12,5 դասի բետոնից	մ ³	57.20	67.937	3885.996
3	բետոնյա իրանի պատրաստում B15 դասի բետոնից	մ ³	116.35	67.937	7904.470
4	բետոնյա իրանի ջրամեկուսացում երկշերտ բիտումով	մ ²	47.60	1.087	51.741
5	Հենապատի երեսապատում 30մմ հաստ.բազալտե սալերով	մ ²	262.80	12.681	3332.567
6	Բազալտե եզրադիրների տեղադրում 450x50մմ	մ ²	12.40	36.233	449.289
7	Բազալտե աստիճանների տեղադրում	զմ	4.50	18.116	81.522
	կանաչապատում				0.000
1	Սևահողի բարձում ավելք	մ ³	216.6	3.623	784.742
2	Սեվահողի ներկում 15կմ-ի	տ	259.92	5.435	1412.665
3	Տարածքի հարթեցում ձեռքով բուսահողի և կարմիր ավազի փոում 12սմ	մ ²	1444.0	0.290	418.760
4	Սերմի ցանում և ջրում	մ ²	1444.0	0.181	261.364
12	Ընդհամենը՝ Բարեկարգում, հենապատեր, կանաչապատում			0.000	18641.851
	սալվածք, ասֆալտոբետոնե ծածկ				
	սալվածք				
1	Տարածքի հարթեցում ձեռքով	մ ²	146.0	0.906	132.276
3	Խճի շերտ սալվածքի տակ 100մմ	մ ²	146.00	0.725	105.850
4	Բետոնե ծածկույթ B15 դասի բետոնով 10 սմ	մ ³	14.6	47.103	687.704
5	բազալտե սալիկներով սալվածքի իրականացում	մ ²	32.0	10.870	347.840
6	5սմ հաստ. ցեմետավազե չոր խառնուրդի պատրաստում բետոնե սալիկների տակ	մ ³	11.40	9.964	113.590
7	Բետոնե գեղարվեստական սալիկներից հատակի պատրաստում	մ ²	114	5.435	619.590
8	Բետոնե եզրաքարերի տեղադրում 150*300	զծմ	251.0	9.058	2273.558
9	Բետոնե եզրաքարերի տեղադրում 150*300	զծմ	125.0	5.435	679.375
	ասֆալտոբետոնե ծածկ				0.000
1	Ասֆալտաբետոնե ծածկի քանդում ներառյալ հիմնատակը /606*0.2/	մ ³	121.2	3.623	439.108
2	Խճի շերտ 10սմ	մ ²	1243.6	0.724	900.366
3	Ա/բետոնե շերտի իրականացում 40մմ հաստությամբ խոշորահատ	մ ²	1243.6	3.623	4505.563
4	Ա/բետոնե շերտի իրականացում 30մմ հաստությամբ մանրահատ	մ ²	1243.6	2.445	3040.602
	Շին աղբի բարձում և տեղափոխում 7կմ հեռ.վրա	տ	220.00	1.811	398.420
13	Ընդհամենը՝ սալվածք, ասֆալտոբետոնե ծածկ			0.000	14243.841
	Ջրամատակարարման և կոյուղու ցանցեր				
	Ջրամատակարարման ցանց				
1	խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից Ø20x1.9մմ հիդրավիկ փորձարկումով	զմ	58.8	0.920	54.096
2	խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից Ø25x2.3մմ հիդրավիկ փորձարկումով	զմ	30.7	1.370	42.059
3	խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից Ø32x3.0մմ հիդրավիկ փորձարկումով	զմ	25.7	1.812	46.568
4	խողովակաշարի անցկացում պողպատե խողովակներից Ø 57x3.5մմ	զմ	149.3	3.623	540.914
5	խողովակաշարի անցկացում պողպատե խողովակներից Ø 76x3.5մմ	զմ	4.5	4.530	20.385
6	Փականներ Φ15մմ	հատ	32	1.812	57.984
7	Փականներ Φ20մմ	հատ	4	1.812	7.248
8	Փականներ Φ25մմ	հատ	3	2.717	8.151
9	Փականներ Φ50մմ	հատ	2	6.340	12.680
10	Ջրատաքացուցիչի տեղադրում «Արիստոն» տիպի N=1.2կվտ/ժ, V=80լ	հատ	8	108.699	869.592
11	Լվացարանի ծորակ-խառնիչի տեղադրում	հատ	8	7.247	57.976
12	Ցնցուղի ծորակ խառնիչ	հատ	5	10.870	54.350

13	Հակահրդեհային փականի տեղադրում $\Phi 50$ մմ /Ներառյալ ճկախողովակը -20մ, պահարանը/	կ-տ	3	90.580	271.740
14	Ջրաչափի տեղադրում $\emptyset 40$ մմ	հատ	1	18.117	18.117
15	Ձտիչ $\emptyset 40$ մմ	հատ	1	13.587	13.587
16	Միացում գործող ցանցին	տեղ	1	13.587	13.587
17	Ֆիտինգներ /տարբեր/	հատ	153	0.181	27.693
18	Պողպատե խողովակների ներկում հակակոռոզիոն ներկով 2 շերտ	մ ²	5.2	1.359	7.067
19	Խրամուղու մշակում IV կարգի գրունտներում ձեռքո	մ ³	8.00	2.717	21.736
20	Հիդրանտի մոնտաժում	մ ³	1.0	135.874	135.874
21	Ջրամատակարարման դիտահորի պատրաստում հավաքովի ե/բ էլեմենտներից $\emptyset 1000$ մմ, h=1.5մ	մ ³	1.5	226.456	339.684
22	Թուջե մտոց	հատ	1	45.291	45.291
23	Մետաղական աստիճանների տեղադրում	տ	0.01	452.912	4.529
24	Դիտահորերի պողպատե ամրացման մասեր	տ	0.02	452.912	9.058
25	Խրամուղու մշակում III կարգի գրունտներում ձեռքով,	մ ³	113.20	2.265	256.398
26	Ավազի նախապատրաստական շերտի իրականացում խողովակաշարի տակից եւ վրայից	մ ³	28.4	5.435	154.354
27	Գրունտի ետլիցք ձեռքով, տոփանումով	մ ³	111.0	2.717	301.587
28	Ավելորդ բնահողի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 13կմ	տ	3.60	2.717	9.781
29	Անցքերի բացում միջհարկային ծածկերում	հատ	12	3.700	44.400
30	Անցքերի բացում միջնապատերում	հատ	44	1.812	79.728
Կոյուղու ցանց					
Կառուցման աշխատանքներ					
1	խողովակաշարի անցկացում կոյուղու պոլիմինիլբլորիդային խողովակներից $\Phi 110$ մմ, հիդրավիկ փորձարկումով /խրամուղում/	զմ	121.6	1.812	220.339
2	խողովակաշարի անցկացում կոյուղու պոլիմինիլբլորիդային խողովակներից $\Phi 100$ մմ, հիդրավիկ փորձարկումով	զմ	93.7	1.812	169.784
3	խողովակաշարի անցկացում կոյուղու պոլիմինիլբլորիդային խողովակներից $\Phi 50$ մմ, հիդրավիկ փորձարկումով	զմ	53.8	1.359	73.114
4	Կերամիկական զուգարանակոնքերի տեղադրում սովորական	հատ	12	36.233	434.796
5	Կերամիկական լվացարանների տեղադրում սիֆոնով	հատ	8	27.175	217.400
6	Լոգատաշտի տեղադրում	հատ	5	36.233	181.165
7	Հոսակների տեղադրում $\Phi 50$ մմ	հատ	8	4.600	36.800
8	Միացում գոյություն ունեցող կոյուղու խողովակներին	տեղ	1	9.058	9.058
9	Խրամուղու մշակում IV կարգի գրունտներում ձեռքով,	մ ³	141.6	2.718	384.869
10	Ավազի նախապատրաստական շերտի իրականացում խողովակաշարի տակից եւ վրայից	մ ³	24.6	5.435	133.701
11	Կոյուղու կլոր դիտահորերի պատրաստում հավաքովի ե/բ էլեմենտներից Ի 1000x900(հ) մմ	մ ³	8.1	226.291	1832.957
12	Թուջե մտոց	հատ	7	45.291	317.037
13	Մետաղական աստիճանների տեղադրում	տ	0.125	452.912	56.614
14	Դիտահորերի պողպատե ամրացման մասեր	տ	0.25	452.912	113.228
15	Գրունտի ետլիցք ձեռքով, տոփանումով	մ ³	133.0	2.266	301.378
16	Ավելորդ գրունտի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 13կմ	տ	26.30	2.717	71.457
Ձեւավոր մասեր պոլիմինիլբլորիդային խողովակների համար					
1	Ստուգիչ $\emptyset 50$ մմ	հատ	2	2.717	5.434
2	Ստուգիչ $\emptyset 100$ մմ	հատ	5	3.623	18.115
3	Քառաբաշխիչ 900	հատ	2	3.623	7.246
4	Անցում $\emptyset 100 \times 50$ մմ	հատ	9	1.811	16.299
5	Եռաբաշխիչ 90° $\emptyset 50 \times 50$ մմ	հատ	8	1.811	14.488
6	Եռաբաշխիչ 90° $\emptyset 100 \times 100$ մմ	հատ	12	2.717	32.604
7	Անկյունակ 90° $\emptyset 50$ մմ	հատ	22	1.811	39.842
8	Անկյունակ 90° $\emptyset 100$ մմ	հատ	18	2.717	48.906
Ընդհանրը՝ Ջրամատակարարման և Կոյուղու ցանցեր				0.000	8262.846
Էլեկտրատեխնիկական մաս					
1	Մետաղական արկղի 750x500x320մմ չափերի	հատ	1	135.874	135.874

4	Բաշխիչ վահանի տեղադրում 18 մոդուլի	հատ	1	72.466	72.466
5	Մուտքի բաշխիչ պահարանի տեղադրում BPY8504 - 250	հատ	1	90.583	90.583
7	Ավտոմատ անջատիչ եռաֆազ 63Ա	հատ	1	7.247	7.247
8	Ավտոմատ անջատիչ եռաֆազ 40Ա	հատ	2	5.435	10.870
	Ավտոմատ անջատիչ եռաֆազ 32Ա	հատ	3	5.435	16.305
9	Ավտոմատ անջատիչ եռաֆազ 25Ա	հատ	1	3.623	3.623
11	Ավտոմատ անջատիչ միաֆազ 16Ա	հատ	5	2.717	13.585
12	Ավտոմատ անջատիչ միաֆազ 10Ա	հատ	11	2.717	29.887
13	Ավտոմատ անջատիչ միաֆազ 6Ա	հատ	11	2.717	29.887
14	Պաշտպանիչ սարք եռաֆազ Y30-25	հատ	12	9.060	108.720
15	Կառավարական կոճակ ՌԷ-2-112 /օդափոխության համար/	հատ	1	18.117	18.117
16	Թողարկիչ կառավարական կոճակով 1.2Ա /օդափոխության համար	հատ	1	9.058	9.058
17	BBΓ _{HR} 4x16մմ ² հատվածքով, պղնձե ջիղերով մալուխի անցկացում /չիրկիզվող/	զմ	87.0	13.588	1182.156
18	BBΓ _{HR} 5x35մմ ² հատվածքով, պղնձե ջիղերով մալուխի անցկացում /չիրկիզվող/	զմ	3.5	22.646	79.261
	BBΓ _{HR} 5x10մմ ² հատվածքով, պղնձե ջիղերով մալուխի անցկացում /չիրկիզվող/	զմ	3.0	4.530	13.590
19	BBΓ _{HR} 5x6մմ ² հատվածքով, պղնձե ջիղերով մալուխի անցկացում /չիրկիզվող/	զմ	15.0	3.623	54.345
20	BBΓ _{HR} 3x1.5մմ ² հատվածքով, պղնձե ջիղերով մալուխի անցկացում /չիրկիզվող/	զմ	800.0	1.812	1449.600
21	BBΓ _{HR} 3x2.5մմ ² հատվածքով, պղնձե ջիղերով մալուխի անցկացում /չիրկիզվող/	զմ	247.0	2.717	671.099
23	խողովակ մետաղական Ø 32մմ	զմ	60.0	0.906	54.360
24	Գոֆրա պլաստմասե խողովակ Ø 50մմ	զմ	42.0	0.453	19.026
	Հողանցում				0.000
1	Շերտավոր պողպատ 40x4	զմ	130.0	2.717	353.210
2	Անկյունավոր պողպատ 50x50x5մմ - L=2,5մ	հատ	30	2.717	81.510
3	III կարգի գրունտի մշակում ձեռքով	մ ³	57.4	2.717	155.956
4	Գրունտի ետլիցք ձեռքով, տոփանումով	մ ³	57.4	2.717	155.956
	Ներքին էլեկտրալուսավորության մաս/				0.000
3	ԼԵԴ տիպի լուսատուների տեղադրում 160վտ հզորությամբ /հերմետիկ/, 4300լմ 1200x150մմ	հատ	10	22.646	226.460
	ԼԵԴ տիպի լուսատուների տեղադրում առաստաղի 36վտ հզորությամբ, 250մմ, տրամագծով 4700լմ	հատ	2	11.776	23.552
	ԼԵԴ տիպի լուսատուների տեղադրում առաստաղի 33վտ հզորությամբ, 250մմ, տրամագծով 4700լմ	հատ	2	10.870	21.740
4	ԼԵԴ տիպի լուսատուների տեղադրում առաստաղի 32վտ հզորությամբ, 250մմ, տրամագծով 4700լմ	հատ	8	10.870	86.960
5	ԼԵԴ տիպի լուսատուների տեղադրում առաստաղի 30վտ հզորությամբ, 250մմ տրամագծով	հատ	8	10.870	86.960
	ԼԵԴ տիպի լուսատուների տեղադրում դրսում հերմետիկ 13վտ հզորությամբ, 250մմ տրամագծով	հատ	1	9.060	9.060
6	ԼԵԴ տիպի լուսատուների տեղադրում 5.6վտ հզորությամբ, 250մմ տրամագծով	հատ	10	9.060	90.600
7	ԼԵԴ տիպի սանհանգույցի լուսատուների տեղադրում 12վտ հզորությամբ, 3300լմ	հատ	36	9.060	326.160
8	Վարդակների տեղադրում	հատ	25	1.812	45.300
9	Վարդակների տեղադրում հողանցումով	հատ	12	2.717	32.604
